

ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

ISSN 1829-054X



Matenadaran
Mesrop Mashtots Institute of Ancient Manuscripts
and “Friends of the Matenadaran” Benevolent Fund express their
gratitude to “JTI ARMENIA” CJSC
for sponsoring the publication of this volume

Մատենադարան
Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտը և
«Մատենադարանի բարեկամներ» բարեգործական հիմնադրամը
երախտագիտություն են հայտնում «ՋԵՅ ԹԻ ԱՅ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ին
սույն հատորի հրատարակությանն աջակցելու համար



MATENADARAN
MESROP MASHTOTS INSTITUTE OF ANCIENT MANUSCRIPTS

BULLETIN OF MATENADARAN
33

Yerevan – 2022

МАТЕНАДАРАН
ИНСТИТУТ ДРЕВНИХ РУКОПИСЕЙ ИМЕНИ МЕСРОПА МАШТОЦА

ВЕСТНИК МАТЕНАДАРАНА
33

Ереван – 2022

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

**ԲԱՆԲԵՐ
ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ**

33

Տպագրվում է Մեսրոպ Մաշտոցի անվան
Մատենադարանի գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհուրդ՝ Վ. Տեր-Ղևոնդյան (գլխ. խմբագիր), Գ. Տեր-Վարդանյան, Գ. Մուրադյան (պատասխանատու քարտուղար), Կ. Մաթևոսյան, Վ. Թորոսյան, Թ. Վ. Լինտ, Ա. Մուլթաֆյան, Ա. Շահնազարյան, Գ. Գասպարյան, Օ. Վարդազարյան, Ա. Թամրազյան, Հ. Համբարձումյան:

«Բանբեր Մատենադարանի» 33, Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ին-տ. երևան, 2022: 536 էջ (ներդիր 16 էջ):

Հ 33/խմբ. Վ. Տեր-Ղևոնդյան, 2022:

«Բանբեր Մատենադարանի» հանդեսի սույն համարում ընդգրկված են պատմությունը, բանասիրությունը, արվեստին և բնագիտությունը նվիրված հոդվածներ, երիտասարդական 7-րդ գիտաժողովի (2021 թ. նոյեմբերի 25-27) նյութեր, հրապարակումներ և մի հաղորդում:

ՉԱԿԱՄ ԳԱՎԱՌՈՒ ԺԷ Պ.-ԺԸ Պ. ԱՌԱՋԻՆ ՔԱՌՈՐԴԻՆ

Բանալի բառեր՝ *Ջակամ, Տավուշ, Վերին Ջակամ, Ղարամուրատ, Լղարակ, լեզգիներ, Օսմանյան կայսրություն, Սեֆյան Իրան, հարկամատյան, նահիյե, աշխարհագիր:*

Ջակամը (Ջագամ, Ջաքամ, Ջագամ, Ձեգամ, Սագիմ) տեղանունը հայկական աղբյուրներում առաջին անգամ հիշատակում է ԺԳ Պ. հեղինակ Վարդան Արևելցին: Խոսելով Գանձակի մասին՝ հեղինակը նշում է. «Գանձակ Գանչայ է իւր վիճակովն եւ Ջակամով, մինչեւ ի դաշտն Գագայ, եւ կայ ի նմա սուրբ ուխտն Խորանաշատ եւ Եղիշէի առաքելոյն աթոռն»¹: Ջակամին ևս մեկ անգամ Վարդան Արևելցին անդրադառնում է Գեղարքունիք գավառը նկարագրելիս. «Գեղամ Գեղարքունի է, ուր կայ ուխտն Մաքենիս, եւ Սեւան կղզին ի մէջ ծովուն: Եւ բազում գաւառք ի կողմն հիւսիսոյ, որ կոչի Ջակամ, ուր կայ սուրբ Խորանաշատ եւ Հոզարծին եւ Գետեաց վանք, ուր աթոռն է Գոշ Մխիթար (Ա) վարդապետին»²: Վարդան վարդապետի ավանդած տվյալները մոտավոր պատկերացում են տալիս գավառի տեղագրության ու սահմանների մասին: Ստացվում է Ջակամը ընկած է Սևանից հյուսիս, իսկ սահմանները հասնում են մինչև Գանձակ³: Արևելքում վերջինիս սահմանները հասնում են մինչև Աղստե գետի հովիտ: Փաստորեն, հեղինակը մի քանի գավառներ ընդգրկում է Ջակամի կազմում: Գավառի մասին հաջորդող դարերի գրավոր աղբյուրներում որևէ տեղեկություն չի հանդիպում: Սկսած ԺՁ Պ. կեսերից՝ Ջակամը բազմիցս վկայված է ինչպես հայկական, այնպես էլ օտար աղբյուրներում:

Սեֆյան շահ Թահմասպ I-ի (1524-1576) հայոց Միքայել Սեբաստացի կաթողիկոսին տրված⁴ (1548 թ. դեկտեմբեր-1549 թ. հունվար) մի հրովարտակում⁵, ի թիվս մի շարք գավառների, հիշատակված է նաև Ջակամը: ԺԷ Պ. վերջին

* ԳԱԱ Պատմության ինստիտուտ, ասպիրանտ, yesayan1990@gmail.com, հոդվածը ներկայացնելու օրը՝ ապրիլի 2, 2022, գրախոսելու օրը՝ հունիսի 2, 2022:

1 Աշխարհացոյց Վարդանայ Վարդապետի, Բնական հրատարակութիւն Հայկ Պէրպլերեանի, Բարիգ, 1960, էջ 11:

2 Նույն տեղում, էջ 12:

3 Ղ. Ինճիճյան, Ստորագրութիւն Հայաստանեայց, Վեներաիկ, 1822, էջ 312:

4 Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, Հրովարտակներ, պրակ առաջին (ԺԵ-ԺՁ դդ.), կազմեց՝ Հ. Փափազյան, Երևան, 1956, էջ 59:

5 Հատկանշական է, որ ԺԷ Պ. Սիմեոն Երևանցի կաթողիկոսի կարգադրությամբ հրովարտակը վերանորոգելիս, վերջինիս կցվել է հայերեն համառոտ բովանդակությունը: Այնտեղ՝ ի տար-

Օսմանյան կայսրությանը մի կարճ ժամանակ հաջողվում է տիրել Զակամին: Այդ ընթացքում նրանք իրականացնում են աշխարհագիր: Աշխարհագիր մատյաններում որպես Գանձակի սանջակի նահիյե (գյուղախումբ) հիշատակված է նաև Զակամը⁶: Այսպիսով, այն որպես վարչամիավոր սկսում է շրջանառվել նաև օտար աղբյուրներում: Գավառն իր մեջ ներառում է Մեծ Հայքի Ուտիք նահանգի Գարդման գավառի մեծագույն մասը, որոշ շրջաններ Տուս-Քուստակ (Տուչքատակ) և Արցախ նահանգի Կողթ⁷ գավառներից⁸, այսինքն՝ համանուն Զակամ գետի վերին ավազանը⁹:

Հետագա տարիներին ծավալված պարսկա-օսմանյան պատերազմների արդյունքում՝ Փե դ. սկզբին, գավառը կրկին անցնում է Սեֆյան տերությանը: Վերջինիս կազմում այն ներառված էր Գանձակ-Ղարաբաղի բեկլարբեկության մեջ: Սեֆյան շահերը Զակամն ու Տավուշը որպես ժառանգական օլքա¹⁰ տվեցին զուլքազար ցեղի շամսադգինլու ճյուղին¹¹: Վերջիններս և նրանց հետ երկրամաս տեղափոխված այլ մանր ցեղեր հետզհետե սկսեցին ստվարանալ հիշյալ գավառներում: Վարելով քոչվորական կենսաձև՝ նրանք ձմռան ամիսներն անց էին կացնում Կուրի հովտում, իսկ ամռանը բարձրանում էին Միափորի և Գարդմանի լեռնային շրջանները¹²: Համաձայն իրանական մի վավերագրի՝ Զակամ գավառը Սեֆյան արքունիքին վճարում էր 5998 թուման և 5980 դինար հարկ: Զակամի կառավարիչը խաղաղ ժամանակ ուներ 1200 զինվոր¹³: Հավանաբար

բերայուն բնօրինակի, Զակամը գրված է հոգնակի ձևով՝ Զակամներ: Վերոնշյալը ևս վկայում է, որ ժՁ դ. գավառը դեռևս բաժանված չէր:

⁶ Dr. Hüsamettin Memmedov. "Beylerbeylikten Hanlığa: Gence - Karabağ". «Tarih Tarih.com». 2 noyabr 2017-ci il tarixində www.tarihtarih.com orijinalından arxivləşdirilib (türk.).

⁷ Թ. Հակոբյան, Ս. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան, *Հայաստանիև հարակից շրջանների տեղանունների բառարան*, հ 2, ցուցակ I, Երևան, 1988, էջ 259: Մակար Լալա. *Բարխաուտարեանց, Աղունից երկիր եւ դրացիք*, Արցախ, Երևան, 1999, էջ 189, (Այսուհետև՝ *Բարխաուտարեանց*), հեղինակը Զակամն ամբողջությամբ նույնացնում է Արցախ նահանգի Կողթ գավառի հետ:

⁸ Մովսես Խորենացի, *Աշխարհացոյց* (ՄՀ, հ. Բ, Ե. դար), Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 2153:

⁹ Ներկայումս ամբողջովին գտնվում է Ադրբեջանի Հանրապետության կազմում՝ և ընդգրկված են վերջինիս Գետաբեկի, Շամֆորի և Թովուզի շրջանների մեջ: Այլ կերպ ասած՝ գավառի տարածքը համապատասխանում է ՀՀ Արծվաշեն անկլավից դեպի հյուսիս ու արևելք ընկած տարածքներին:

¹⁰ Քոչվոր ցեղերի պարագլուխներին կամ զինվորականներին տրվող հողային տիրույթ, որը ժառանգաբար փոխանցվում էր, տե՛ս Ք. Կոստիկյան, Հ. Գևորգյան, «Սեֆյան շահերի նորահայտ հրովարտակները Մատենադարանի կաթողիկոսական դիվանում», Բանբեր Մատենադարանի, №26, Երևան, 2018 էջ 66:

¹¹ П. Петрушевский, *Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI-начале XIX вв.*, Ленинград 1949, с. 135.

¹² Հենց նշված ցեղի անունից էլ հետագայում տարածաշրջանը սկսեց կոչվել Շամաղին, Շամաղիի ձևով:

¹³ Tadhkirat Al-Muluk, a manual of Safavid Administration, translated and explained by V. Minorsky, London, 1943, p. 101. Ավելորդ չէնք համարում նշել, որ նույն էջի ծանոթագրու-

հենց ժէ դ. սկզբին այն բաժանվում է երկու մասի՝ Վերին Զակամ և Ներքին Զակամ: Ժամանակ առ ժամանակ գավառն իր մեջ ներառել է նաև Տավուշ¹⁴ գավառից որոշակի տարածքներ¹⁵, ապա ավելի ուշ շրջանում երկու տեղանունները դուրս են մղվել գործածությունից և սկսել են հիշատակվել Շամշադին ձևով:

Զակամը լայնորեն հիշատակվում է հատապես ժէ դ. հայկական սկզբնաղբյուրներում: Գրավոր աղբյուրների հաղորդած տեղեկություններից կարելի է եզրակացնել, որ այն քննվող ժամանակաշրջանի Հայաստանի առավել բնակեցված երկրամասերից էր: Պարսկա-օսմանյան պատերազմներից հետո գավառում կատարվում են լայնածավալ շինարարական աշխատանքներ: Ավերված հոգևոր հաստատությունները նորոգվում են, զուգահեռաբար հիմնվում են նորերը: Բանն այն է, որ հյուսիսարևելյան Հայաստանը՝ ներառյալ Զակամը, մասամբ զերծ էր մնացել շահաբասյան բռնագաղթից¹⁶: Բացի այդ, դեպի այդ գավառ նկատվեց նաև բնակչության որոշակի միգրացիա, որը պայմանավորված էր 1635 թ. Արարատյան դաշտում ընթացող պարսկա-օսմանյան նոր ռազմական գործողություններով. «Եւ երին ի բնակութենէ իւրեանց և ցրուեցան՝ ոմանք՝ յաշխարհն Վրաց, ոմանք՝ յԱղուանս, ի Զակամ, ի Գեանճալ, ի Խաչեն, ի Վարանդ և այլ ուր և կարացին»¹⁷: Զակամը փաստորեն լինելով առավել ապահով բնակավայր, բնակեցվեց այլ տեղերից՝ հիմնականում կենտրոնական Հայաստանից գաղթած բնակչությամբ: Այս ամենի արդյունքում գավառի բնակավայրերն ավելի են ստվարանում և հիմնվում են նաև նոր գյուղեր: Գավառի մի շարք գյուղեր հիշատակվում են հայերեն ձեռագիր հիշատակարաններում, որոնք փաստորեն ժամանակին հայտնի գրչօջախներ էին¹⁸:

Վերին Զակամ գավառում գտնվող նշանավոր Մելիքզադա գյուղի մասին

քյան մեջ, Մինուսկին Զակամը սխալմամբ տեղադարձում է Կախեթի կազմում՝ Զաֆաթալայի շրջանում՝ նույնկերպ վարվելով նաև էջ 166-ի համար 3 ծանոթագրության մեջ:

¹⁴ Խարայել Օրու՝ 1699 թ. հեղինակած Հայաստանի ազատագրության «Պֆայցյան» ծրագրում հիշատակված է նաև Զակամ գավառը: Համաձայն այդ ծրագրի՝ Զակամ գավառից Հայաստանի ազատագրության գործը գլուխ բերելու նպատակով ժողովվելու էր 5000 զորք: Տե՛ս Ա. Հովհաննիսյան, *Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության*, գիրք երկրորդ, Երևան, 1959, էջ 374: Ա. Հովհաննիսյանը Զակամը սխալմամբ ամբողջովին նույնացնում է Շամշադինի՝ ներկայիս ՀՀ Տավուշի մարզի Բերդի տարածաշրջանի հետ:

¹⁵ Տե՛ս օրինակ 1620 թ. Լդրակ գյուղում ընդօրինակված Ավետարանի հիշատակարանը, որտեղ Խորանաշատը ներկայացված է Զակամ գավառի կազմում (Հայերեն ձեռգրերի ժէ դարի հիշատակարաններ (1601-1620 թթ.), կազմեցին՝ Վ. Հակոբյան, Ա. Հովհաննիսյան, Երևան, 1974, էջ 725):

¹⁶ Ա. Եսայան, *Ժողովրդագրական տեղաշարժերը Հյուսիսարևելյան Հայաստանում շահ Աբասի կառավարման շրջանում*, Հայագիտության հարցեր, 1(19), Երևան, 2020, էջ 37-49:

¹⁷ Զաֆարիա Քանաֆեղի, աշխատասիրությամբ Ա. Վիրաբյանի, Երևան 2015, էջ 95:

¹⁸ Զակամ գավառի գրչօջախների մասին տե՛ս Ա. Կարապետյան, *Հյուսիսային Արցախ*, Երևան, 2004, էջ 278, տե՛ս նաև էջ 587 ֆուտեզը, տե՛ս Թ. Մինասյան, *Ուտիքի գրչություն կենտրոնները*, Երևան, 2020, էջ 108-120:

հիշատակություն կա Առաքել Դավրիժեցու երկում: Ինչպես նշվեց, ժՁ դ. վերջին, կարճ ժամանակով, տարածաշրջանն անցել էր Օսմանյան կայսրությանը: Տեղի հայ ավագանին, նեղվելով օսմանյան հալածանքներից, ապավինում է պարսից շահ Աբասին (1587-1629): Պատմիչը, մանրամասնորեն թվարկելով բոլորին, նշում է նաև Մելքիսեթ եպիսկոպոսին, որը Մելիքզադա գյուղից էր. «Մելքիսեթ եպիսկոպոսն ի վերին Զակամայ ի Մելիքզատայ գեղջէ...¹⁹»: Գավառում Մելքիսեթ եպիսկոպոսի ունեցած դիրքի ու ազդեցության մասին է վկայում հետևյալ հաղորդումը. «որ էր երկրիս իշխանն հոգեւոր և մարմնաւոր»²⁰: Մելիքզադա գյուղում գործել են մի քանի եկեղեցիներ, որի մասին վկայված է 1652 թ. Հակոբ քահանայի ընդօրինակած Ավետարանի հիշատակարանում. «Ի ՌՃԱ (1652) թուականիս Հայոց և ի յամսեանն մարտի ի Ա (1), աղուհացից պահոց առաջին շաբաթին, երկուշաբթի օրն, եղև սկիզբն գրութեան սբ. Աւետարանիս և կատարեցաւ ապրիլ ամսոյ ժե (15), յաւուր մեծի հինգշաբթին...: Արդ՝ գրեցաւ սա ի յերկիրս Զակամ, ի գիւղս Մելիքզատայ, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնիս և Ս. Թովմայ և այլ Ս. Նահատակի, որ աստ է, ձեռամբ անարուեստ և փծուն գրչի Յակոբայ յետնեալ քահանայի»²¹: Գրչի հիշատակած մի քանի եկեղեցիներից կարելի է եզրակացնել, որ գյուղը խիտ բնակչություն պետք է ունեցել: Այս ամենը արձանագրում է նաև արդեն լքված ու ավերված գյուղատեղի ժԹ դ. վերջերին այցելած Մակար արքեպիսկոպոս Բարխուդարյանցը: Վերջինս նկատում է ընդարձակ հայկական գերեզմանոցի, ինչպես նաև Հակոբ քահանայի հիշատակած եկեղեցիների ավերակները²²:

Գավառի առավել հաճախ հիշատակվող խոշոր բնակավայրերից էր Ղարամուրատը²³: Բնակավայրի մեծության մասին է խոսում Բարխուդարյանցի հետևյալ դիտարկումը. «Գիւղիս, եկեղեցուս եւ հանգստարանիս ծաւալից այցելուն եզրակացնում է, թէ Մեծ-Ղարա-Մուրատս գիւղաքաղաք եղած է»²⁴: Ժէ դ. սկզբին, անհայտ պատճառներով, Մեծ Ղարամուրատում էին հաստատվել նաև Ասրիկ գետի ավազանում գտնվող Չաթխա գյուղի բնակիչները²⁵: Դարի առաջին կեսին գյուղում գործում էր երկու եկեղեցի, որոնցից մեկը, համաձայն Դավիթ Գեղամացի եպիսկոպոսի թողած հիշատակարանի, կառուցվել է 1610-ական թթ.: Չաթխաից Ղարամուրատ գաղթած Աղաբաբի կողմից²⁶: Վերջինս կառու-

¹⁹ Առաքել Դավրիժեցի, Գիրք պատմութեանց, Երևան, 1990 էջ 63:

²⁰ Հայերեն ձեռագրերի ժէ դարի հիշատակարաններ, հ. Ա, էջ 363:

²¹ Հայերեն ձեռագրերի ժէ դարի հիշատակարաններ, հ. Գ, էջ 476:

²² Բարխուդարեանց, էջ 319:

²³ Հավանաբար ժէ դ. առաջին կեսերին գյուղից ոչ հեռու հիմնադրվում է նոր բնակավայր՝ Փոֆր Ղարամուրատ գյուղը:

²⁴ Բարխուդարեանց, էջ 318:

²⁵ Հայերեն ձեռագրերի ժէ դարի հիշատակարաններ, հ. Ա, էջ 367:

²⁶ Նույն տեղում:

ցում է նաև ջրաղաց: Առավել նշանավոր էր Սուրբ Ամենափրկիչ եկեղեցին, որը, համաձայն շինարարական արձանագրության, կառուցվել է 1634 թ.²⁷: Ղարամուրատը նաև հայտնի էր գյուղից ոչ հեռու գտնվող Կուսանաց և Հարանց անապատներով: Հիշատակված հոգևոր կենտրոններում ընդօրինակվել են բազմաթիվ ձեռագրեր:

Վերոհիշյալ Աղաբաբի որդի Իսկանդար բեկը կնուծյան է առել հարևան Գեղարքունիքի նշանավոր մելիք Շահնագարի²⁸ դստերը²⁹: Ինչպես երևում է նրանց սերունդները երկար ժամանակ ազդեցիկ դիրք են ունեցել տարածաշրջանում: Այս տոհմի ներկայացուցիչները հիշատակվում են 1709 թ. Ղարամուրատի հարևան **Սուլթանեցիք** գյուղում ընդօրինակված Հայսմավուրքի հիշատակարանում. «...և ի տէրութեն **Թիւրգանլարի**³⁰ նահանգիս նիւթվալի խանի որդի Մեհրալի խանին և շահրիար Աղաբաբի որդուց Իսկանդարի որդուց Հախնագարի որդուց Աղապապայ քալանթարի և մելիքութեանս իւր որդի Մելիքթախիրի, որք են բնիկ գեղջիւ ղարամուրատեցի»³¹: Կարող ենք արձանագրել, որ Աղաբաբի տոհմը գրեթե մեկ դար կարևորագույն դերակատարություն է ունեցել գավառում, իսկ նրանց վերջին՝ մեզ հայտնի ժառանգները, հիշատակվում են որպես «քալանթար» և «մելիք»:

Վերին Զակամ գավառում գտնվող մեկ այլ բնակավայրի՝ **Շաքարբեկ** գյուղի մասին տեղեկանում ենք 1633 թ. ընդօրինակված Ավետարանի հիշատակարանից. «ի յերկիրս Վերին Զակամ, ի գիւղս որ կոչի Շաքարբեկ...»³²:

Գավառի նշանավոր բնակավայրերից էր **Պապաջան** գյուղը, որը հիշատակվում է 1655 թ. Ավետիս քահանայի ձեռքով ընդօրինակված Շարակնոցի հիշատակարանում: Գրիչը նաև կցկտուր տեղեկություններ է հաղորդում ժամանակի քաղաքական անցքերից. «Արդ՝ եղև ավարտ գրչութեան... ի շրջակայութեան հայկազեան տումարի հազար հարիւր և չորս (1655) ամի, ի դառն և անբարի, վշտաշատ ժամանակի, որ երերուր և տատանեալ ազգս Հայոց, ի ձեռն այլազգեաց և անօրինաց և յանրիաւ պահանջողաց, ի հայրապետութեան տեառն Պետ-

²⁷ **Բարխուտարեանց**, էջ 318:

²⁸ Մելիք Շահնագարի և նրա տոհմի մասին մանրամասն տե՛ս Ք. **Կոստիկյան**, *Գեղարքունիքի Մելիք-Շահնագարյանների պատմությունից* (Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. XXIV), Երևան, 2005, էջ 303-329:

²⁹ «Թվականին ՌՀ (1621)-երոր[դ] Հախնագարն իլաւ, որ է որդի[ի] Յիսկանտար բեկին և թոռն պարոն Աղաբաբին: Քրիստոս Աստուած զինքն, ընդ երկայն ավորս պանէ: Ի մաւր կողմանէ թոռն Մելիք Շահնագարին», *Հայերեն ձեռագրերի Ժէ դարի հիշատակարաններ*, հ. Ա, էջ 364:

³⁰ Վերին Զակամ գավառի հյուսիսարևելյան հատվածը, հավանաբար դարավերջից, հիշատակվում է որպես առանձին վարչամիավոր՝ Թուրգանլար ձևով:

³¹ ՄՄ 3813, ք. 496բ.:

³² *Հայերեն ձեռագրերի Ժէ դարի հիշատակարաններ*, հ. Բ, էջ 531:

րոսի նորընծայ և սրբազան կաթողիկոսի և առաքելական աթոռ սորին Գան-
ձասար կոչի, և ի խանութեան երկրիս մերում Մուրթուզա խանին, ի սբ. և ի գե-
րահոչակ ուխտիս որ կոչի ... Չարեքայ անապատ... Բայց եղև սկսանել Շարակ-
նոցիս ի երկրին մերում Վերին Զակամ, ի հայրենական գեօղն իմ, անուն Պապա-
ջան: Եւ այժմ օտարացեալ և փախուցեալ կամ ի երկիրս, զոր ի վերոյ գրեցաք, ի
գիւղս որ կոչի Խաւունիս, որ եղև աւարտ Շարակնոցիս, զի ի շենս այս կայ պա-
տուական Զուխտակ եկեղեցիս... Գրեցաւ ձեռամբ ամենամեղաւոր գրչի Աւետիս
անպիտանի, [որ] քահանայ կոչի»³³: Հիշատակարանից պարզ է դառնում, որ
Պապաջան գյուղում ինչ-որ աղետ է կատարվել, և փախստական քահանան
հայտնվել է հարևան Շամքոր գավառի Խավունիս³⁴ գյուղում: Արդեն երեք տարի
անց Ավետիս քահանան հայրենի գյուղում էր, և խաղաղ պայմաններում ընդ-
օրինակում է հերթական ձեռագիրը. «Եղև զրաւ գրչութեան քրիատոսախօս և
տիեզերալոյս սբ. Կարմիր Աւետարանիս ի թուաբերութեանս հայկազեան տոհմի
հազար հարիւր և ութ (1659) ամի, խաղաղութիւն ժամանակի, երկիրս Վերին
Զագամ, ի գեօղս Պապձան կոչի, ընդ հովանեաւ Դար[ա]մուրատի յանապա-
տի...»³⁵:

Հաջորդ ձեռագիրը քահանան ավարտել է 1661 թ., որի հիշատակարանից
իմանում ենք, որ գյուղում գործել է երկու եկեղեցի³⁶: Ավետիս քահանայից
հայտնի վերջին ձեռագիրը կազմվել է 1668 թ.³⁷: Բացի նշված քահանայից, Պա-
պաջան գյուղում Հովհաննէս անունով քահանան ընդօրինակել է Ավետարան³⁸:

Վերին Զակամի հայտնի գյուղերից էր **Սուլթանեցիքը**: Առաջին անգամ գյու-
ղի մասին վկայություն հանդիպում ենք 1647 թ. գրված Ավետարանի հիշատա-
կարանում³⁹: Ձեռագրի հեղինակը Մխիթար անունով աշխարհական է, համա-
ձայն որի, գյուղում գործում էր Սուրբ Աստվածածին եկեղեցին⁴⁰:

Նույն հեղինակի՝ արդեն 1671 թ. ձեռագիր հիշատակարանից իմանում ենք,
որ տարածաշրջանում համաճարակ է մոլեգնել՝ դառնալով մեծ թվով մահացու-
թյունների պատճառ. «Ի յայսմ ամի անկաւ սաստիկ մահ յերկիրս Վերի Զակա-
մայ: Որ օր մի ի տան միում եօթն ոգի վաղճանեցաւ»⁴¹: Սուլթանեցիք գյուղում

³³ Հայերեն ձեռագրերի ժէ դարի հիշատակարաններ, հ. Գ, էջ 691:

³⁴ Խավունիս գյուղի տեղագրությունը տես Ս. Կարապետյան, նշվ. աշխ., էջ 101:

³⁵ Հայերեն ձեռագրերի ժէ դարի հիշատակարաններ, հ. Գ, էջ 867:

³⁶ Հ. Ոսկեան, Արցախի վանքերը, Վիեննա, 1953, էջ 165:

³⁷ Յուզակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Բ, Երևան, 1970, էջ 769:

³⁸ Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց, հ. Բ, Երևան, 2004, էջ 90:

³⁹ Հայերեն ձեռագրերի ժէ դարի հիշատակարաններ, հ. Գ, էջ 247:

⁴⁰ Նույն տեղում:

⁴¹ ՄՄ 6759, տող 256բ, հմմտ. Բարխուսարեանց, էջ 305:

Մխիթար գրչի ընդօրինակած մեզ հայտնի վերջին ձեռագիրը թվագրվում է 1678-ով⁴²: Արդեն ժԲ դ. սկզբին, ինչպես նշվեց վերևում, գյուղում հիշատակվում են դարամուրատեցի Աղաբաբի «մելիք» և «քալանթար» ժառանգները:

Դարավերջին Սեֆյան Իրանում սկսված ճգնաժամը բացասաբար ազդեց նաև տերությունների ենթակա տարածքների վրա: Ստեղծված իրավիճակից շտապում է օգտվել Սեֆյանների վաղեմի թշնամի Օսմանյան կայսրությունը: ԺԲ դ. սկզբից գավառը, և առհասարակ հյուսիսարևելյան Հայաստանը հսկայական վնասներ կրեցին լեզգիների արշավանքներից: Մի քանի հաջող ավարառություն իրականացնելով Շիրվանում՝ վերջիններս ստացան նաև Օսմանյան Թուրքիայի աջակցությունը⁴³ և սկսեցին մշտական վտանգի ու քառսի մեջ պահել Իրանի հյուսիսային սահմանները: Հյուսիսարևելյան Հայաստանը դարձավ լեռնականների ավարառության հիմնական վայրերից մեկը: Վերջիններիս օժանդակում և դրդում էր Օսմանյան կայսրությունը, որը նպատակ ուներ հարմար առիթի դեպքում նվաճել ամբողջ տարածաշրջանը: Լեզգիների արշավանքները գնալով սկսեցին պարբերական դառնալ՝ միաժամանակ ընդլայնվեցին նրանց ավարառության սահմանները: Կուրի ձախափնյա շրջանները ասպատակելով նրանք ձեռնամուխ եղան Արցախի ու հարակից գավառների ամայացմանը: Ի թիվս այդ գավառների, տուժեց նաև Զակամը. «Եւ այսպէս գրգռեալ ամ յամէ ասպատակ սփռեալ յայս կողմ և յայն կողմ Կուր գետոյն յերկրին Շաքուայ և Դապալու և Գասանու նահանգին մինչև մերձ ի Շամախի քաղաք: Իսկ յայսմ կողմանէ յլովք ի նահանգէն Դագախու, որ է Ախստեվո՛ւ և ի երկրէն Ամիրշամ Շատինլուէն որ են Զակամներն»⁴⁴: Լեզգիների զինված խմբերը ավերելով ու թալանելով իրենց հանդիպած բոլոր բնակավայրերը՝ հասնում են մինչև Սևանա լճի շրջակայք⁴⁵: Բնակչության մի մասը տարվում էր ստրկության և վաճառվում, իսկ լեռներում և այլ անվտանգ վայրերում ապաստանած բնակչությունը ծանր զրկանքների գնով մի կերպ պահպանում էր գոյությունը: Գավառների փաստացի կառավարիչ հանդիսացող մահմեդական ցեղապետերն անկարող եղան արդյունավետ դիմադրություն կազմակերպել: Զակամը լեզգիների կողոպուտին ու գերեվարությանն է ենթարկվում նաև 1720 թ.⁴⁶: Վերին Զակամի և Միափոր գավառի

⁴² Թ. Մինասյան, նշվ. աշխ. էջ 117:

⁴³ А. К. Бакиханов, *Гюлистан-и Ирам*, Баку, 1991, с. 63.

⁴⁴ Եսայի Հասան-Ջալալյանց, *Պատմութիւն համառօտ Աղուանից երկրի*, Ստեփանակերտ, 2007, էջ 51: Այսուհետև՝ Եսայի պատմիչ:

⁴⁵ Մ. Չամչյանց, *Հայոց պատմություն*, հ Գ, Երևան, 1984, էջ 784:

⁴⁶ Մայր Յուզակ հայերեն ձեռագրաց, հ. Գ, կազմեց՝ Օ. Եգանեան, Երևան, 2007, էջ 434:

կառավարիչ Մեհրաբի խանը⁴⁷ 1719 թ. փորձեց զսպել լեզգիներին⁴⁸, սակայն դատելով հետագա տարիներին շարունակվող նրանց արշավանքներից, խանի ջանքերը արդյունք չեն տվել:

Գավառի վրա լեռնականների արշավանքները կրկնվեցին նաև հետագա տարիներին: Ձեռագիր մի Ավետարանի հիշատակարանում՝ թվագրված 1722 թ., կարդում ենք. «...գրեցաւ ի դառն եւ վերջացեալ ժամանակի որոյ (յորում) Լեզգին եկաւ Գանջոյ, Պարտոյ, Խաչենոյ, Վարանդոյ, Շաքոյ, Շամախոյ, Վարաստանոյ, Զակամայ շորեքանկիւն երկիրն, ամէն ասպատակեալ աւերեցին...»⁴⁹: Լեզգիների կողոպուտին հաջորդեց 1722 թ. գանձակցիներին օգնության գնացած վրացական զորքերի ավարառութիւնը: Համաձայն Եսայի պատմիչի, տարածաշրջանը ենթարկվում է սաստիկ կողոպուտի, ինչպիսին նույնիսկ լեզգիները չէին իրականացրել. «...ազգն վրաց, առաւել անողորմ քան զԿովկասայինսն.»⁵⁰: Ավարառութիւն են ենթարկվում Գանձակի շրջակայքից մինչև Արցախ ընկած բնակավայրերը «...սփռեցան ի լերինս և ի ծորակս և յարձակ վայրս երկրի Զակամու, Շամքորոյ, Գանջապասանու, Ոսկանապատու, Քուրաքչայու, և Պարտայու, մինչև ի Գուլստան գեղն և ի գետն Դրդու»⁵¹:

Օգտվելով Սեֆյան Իրանի ճգնաժամից և համաձայնութիւն գալով Ռուսաստանի հետ՝ օսմանյան զորքերը 1724 թ. սկսեցին Իրանին ենթակա հյուսիսային շրջանների նվաճումը: Ի թիվս հյուսիսարևելյան Հայաստանի գավառների՝ Զակամն օսմանցիներին անցավ 1725 թ.⁵²:

Օսմանյան զորքերի արշավանքն ու նվաճումներն ուղեկցվում էին հայ բնակչության գերեվարութեամբ: Վերջիններս ստրկութիւն էին վաճառվում Կոստանդնուպոլսի շուկաներում⁵³: Այս ամենի հետևանքով, առանց այդ էլ մոտ երկու տասնամյակ ավերվող տարածաշրջանը բավականին մարդաթափ եղավ:

Նոր նվաճված տարածքներում թուրքերը ձեռնամուխ եղան աշխարհագրի անցկացման, որի արդյունքներն ամփոփված են «Գանձակ-Ղարաբաղի էյալեթի 1727 թ. ընդարձակ դաֆթարում»⁵⁴: Հյուսիսարևելյան Հայաստանի շրջանները

47 ՄՄ 3813, տող 496բ:

48 Մանր ժամանակագրութիւններ, XII-XVIII դդ., հ. I, կազմեց՝ Վ. Ա. Հակոբյան, Երևան, 1951, էջ 289:

49 Բարխուտարեանց, էջ 233:

50 Եսայի պատմիչ, էջ 61:

51 Նույն տեղում:

52 Ա. Աբրահամյան, Մի էջ Անդրկովկասի ժողովուրդների և հայ-ռուսական հարաբերութիւնների պատմութիւնից, Երևան, 1953, էջ 114:

53 Մ. Զամչյանց, նշվ., աշխ. էջ 783:

54 T.C. Cumhurbaşkanlığı Devlet Arşivleri Başkanlığı Osmanlı Arşivleri, TT_d, sıra nu: 903, Tapu Tahrir Defteri (այսուհետև՝ BOA):

ընդգրկված են *Խլխնայի լիվայի մեջ*: Այն իր հերթին բաժանվում է 9 նահիյեների՝ *Խլխնա, Հասանսու, Թավուա, Ախնջի, Ասրիկ, Ղարաղայա, Թուրգանլար, Վերին Զական, Ներքին Զական*: Վերջին երեք նահիյեները համապատասխանում են Զական գավառին, ուստի անդրադառնանք դրանց: Գավառի մի քանի գյուղեր, որոնք այլ աղբյուրներում չեն հանդիպում և հետագա տարիներին լքվել են, դժվար է տեղորոշել: Այնուհանդերձ, բնակավայրերի ճնշող մեծամասնությունը բավականին հարուստ պատմական անցյալ ունեցող գյուղեր են: Ստորև կներկայացնենք վերոնշյալ երեք նահիյեների գյուղերը ըստ հարկատուների թվաքանակի⁵⁵:

Թուրգանլար նահիյեն⁵⁶ Վերին Զականի հետ միասին

Թուրգանլար նահիյեում հիշատակվում է հայտնի *Մելիքագազ* գյուղը և վերջինիս մեջ մտնող *Քըլբաշ (կամ Ղըլբաշ) մագրան⁵⁷*: Այստեղ հաշվառված է 23 հարկատու⁵⁸: *Ղարաքեշիշ* գյուղը և *Գունաբաղան մագրան* դատարկ են⁵⁹: Մոտակայքում գտնվող բնակեցված գյուղերից է *Շընըք* գյուղը և *Իսիդերե* մագրան՝ 10 հարկատուներով: *Շընըք* գյուղի մոտակայքում գտնվում է *Առինջ(°)* քըշլաքը (նաև ղշլաղ՝ ձմեռանոց), որտեղ հաշվառված է 13 մուսուլման հարկատու: Վերջիններս ձմեռում են *Շընըք* գյուղի տարածքում և հարկերը վճարվում են գյուղի հետ համատեղ⁶⁰:

Թուրգանլար նահիյեում գտնվող Շընըքբեյիսե(° Շաթաքբեյիսե(° Շաթաղբեյիսե(°) գյուղը ունի 12 հարկատու⁶¹:

Նահիյեի առավել բնակեցված գյուղերից է *Բոյուք Քարամուրաղ*՝ նշանավոր *Մեծ Ղարամուրատ* գյուղը՝ 57 հարկատուներով: Գյուղում հաշվառված է նաև 2 ջրաղաց⁶²: Մոտակայքում գտնվող *Ուզունթալա⁶³*, *Շեքերբեյ⁶⁴* (հայկական աղբ-

⁵⁵ Բնագրի թարգմանությունը բարձր մակարդակով իրականացնելու համար մեր երախտագիտությունն ենք հայտնում Գ.Ա. Արևելագիտության ինստիտուտի գիտաշխատող Գեորգի Միրզաբեկյանին:

⁵⁶ Թուրգանլար և Վերին Զական նահիյենները հարկամատյանում ներկայացված են միասին: Հետագա շարադրամի տվյալները ցույց են տալիս, որ հեղինակները Վերին Զականի բնակավայրերը գրեթե ամբողջովին ներառել են Թուրգանլար նահիյեի մեջ:

⁵⁷ Հողատարածք, որը զուրկ էր մշտական բնակությունից:

⁵⁸ BOA, էջ 283-284:

⁵⁹ Նույն տեղում, էջ 284-285:

⁶⁰ Նույն տեղում:

⁶¹ Նույն տեղում, էջ 285:

⁶² Նույն տեղում, էջ 285-286:

⁶³ Նույն տեղում, էջ 286:

⁶⁴ Հայերեն ձեռագրերի ժէ դարի հիշատակարաններ, հ. Բ, էջ 531:

յուրներում Շաքարբեկ), Բեդիշան՝ այլ անունով Լեշբարթավիս⁶⁵ և Փոքր Ղարամուրատ գյուղերը դատարկված են⁶⁶: Բնակեցված գյուղերից հիշատակվում է Շաքարբեկ գյուղին հարակից Դելիքթաշ գյուղը⁶⁷ 5 հարկատուներով: Մեծ Շամլըք գյուղն ունի 10 հարկատու⁶⁸: Դատարկված են Պապաջան, Շահնագար, Արաֆխան, Կիրավանք, Բեքարսլան, Աքքելիսե⁶⁹ գյուղերը⁷⁰:

Ներքին Ձական նահիյե

Նահիյեյում բնակեցված գյուղերն են՝ Քամանդար⁷¹՝ 31 հարկատու, Բուլանըք՝ 5 հարկատու, Լաֆարեկ, (Լղարակ) 16 հարկատու⁷², Քեշիշքենդ⁷³ գյուղը՝ 23 հարկատուներով: Գավառի մարդաշատ գյուղերից է Չարդաքըր (Չարդախուր) գյուղը՝ 44 հարկատուներով: Գյուղում կա նաև երկու ջրաղաց⁷⁴: Ներքին Ձականի բնակեցված գյուղերից վկայված են նաև Չաքիր⁷⁵ գյուղը՝ 12 հարկատու⁷⁶, Ղազանչի գյուղը 22 և Չադա գյուղը 9 հարկատուներով: Չադա գյուղում գործում է նաև 1 ջրաղաց⁷⁷: Դատարկված են Աթաբեք, Սոյուք բուլաք, Սաթըշմըշ, Յասամալ⁷⁸, Չանախչի, Սամանլըք գյուղերը⁷⁹:

⁶⁵ Գյուղի տեղագրությունը տե՛ս Ս. Կարապետյան, նշվ. աշխ. էջ 85:

⁶⁶ BOA, էջ 286-287:

⁶⁷ Նախորդ էջում հեղինակները գյուղը հավանաբար վրիպամամբ ներկայացրել են իբրև մագրա:

⁶⁸ Բնակավայրի ավերակները հիշատակում է նաև Բարխուդարյանցը, տե՛ս նշվ. աշխ., էջ 320: Բնակիչները դարավերջին լ՛իել են գյուղը՝ հաստատվելով Շուլավերում: Տե՛ս Ս. Կարապետյան, նշվ. աշխ. էջ 300:

⁶⁹ Արդեն ավերակ դարձած գյուղի, գերեզմանոցի և մեծ եկեղեցու մասին վկայում է նաև Բարխուդարյանցը, տե՛ս նշվ. աշխ., էջ 319:

⁷⁰ BOA, էջ 287-289:

⁷¹ Գյուղի հողատարածքները պատկանել են հորանաշատի վանքին, ժԸ դ. գյուղի բնակիչները տեղափոխվում են Շուլավեր, իսկ գյուղատեղին ու վարելահողերը շարունակում են օգտագործել հարևան Լղարակի բնակիչները:

⁷² Գյուղը հետագա տասնամյակներում հանդիպում է Բադա ձևով: Բնակավայրն, ի տարբերություն հարակից հայկական մյուս գյուղերի, երկար ժամանակ պահպանել է իր գոյությունը: Սակայն 1905-1906 թթ. հայ-թաթարական ընդհարումների օրերին գյուղը մեծ կորուստներ է կրում, իսկ բնակչությունը ստիպված հեռանում է, տե՛ս Քաջբերունի, Բադա գիւղի աւերումը, Արարատ, 1910, №3-12:

⁷³ Քեշիշքենդ գյուղը, հավանաբար, համապատասխանում է հորանաշատից ոչ հեռու գտնվող Իրիցշեն գյուղատեղին, տե՛ս Բարխուդարեանց, նշվ. աշխ., էջ 326:

⁷⁴ BOA, էջ 289-292:

⁷⁵ Չաքիր գյուղն է, որի մասին տե՛ս մանրամասն Ս. Կարապետյան, նշվ. աշխ. էջ 519:

⁷⁶ BOA, էջ 292-293:

⁷⁷ Նույն տեղում, էջ 293-294:

⁷⁸ Նույն տեղում, էջ 294:

⁷⁹ Նույն տեղում, էջ 295:

Թուրգանյար և Վերին Զակամ նահիյե				Ներքին Զակամ նահիյե			
Բնակեցված գյուղեր	Քրիստոնյա (հայ)	Մուսուլման	Դատարկված գյուղեր	Բնակեցված գյուղեր	Քրիստոնյա (հայ)	Մուսուլման	Դատարկված գյուղեր
Մելիֆգադա	23		Ղարաֆեշիշ	Քամանդար	31		Աթաբեֆ
Շընըֆ (վերջինիս հետ Առինջ քըշլաֆ-13 մուսուլման)	10	13	Ուզունթալա	Լդարակ	16		Սոյում Բուլաֆ
Շընըֆֆելիսե	12		Շաֆարբեկ	Քեշիշֆենդ	23		Սաթըլմըշ
Մեծ Ղարամուրատ	57		Բեդեշան (Լեշֆարթալիս)	Զարդախլու	44		Յասամալ
Դեյիֆդաշ	5		Փոֆր Ղարամուրատ	Զագիր	12		Զանախշի
Մեծ Շամլըֆ	10		Պապաշան	Ղազանշի	22		Սամանլըֆ
			Շահնագար	Զադա	9		
			Արաֆխան	Բուլանաֆ	5		
			Կիրավանֆ				
			Բեֆարսլան				
			Աֆֆելիսա				
Զակամ գավառի (Վերին և Ներքին) հարկատուների ընդհանուր թիվը							292
Հայ			279 (95,5%)	Մուսուլման		13 (4,5%)	
Բնակեցված գյուղերի թիվը			14	Դատարկված գյուղերի թիվը		17	

Այսպիսով ստացվում է, որ Զակամ գավառում⁸⁰ բնակեցված է ընդհանուր առմամբ 14 գյուղ: Դրանցից 13-ն ամբողջովյա՛մբ բնակեցված են հայերով: Շընըք հայաբնակ գյուղին կից գտնվող Առինջ(°) քըշլաքում են միայն հաշվառված

⁸⁰ Նկատի ունեն՛ք ամբողջական գավառը՝ Վերին և Ներքին:

մուսուլմաններ, որոնք փաստորեն ներառված են գյուղի կազմում, և հարկերը վճարում են գյուղացիների հետ: Ընդհանուր հարկատուների թիվը ամբողջ գավառում կազմում է 292 հոգի, որից 279 հայ⁸¹, 13 մուսուլման: Ընտանիքի միջին թվաքանակ ընդունելով 7-ը⁸², ընդհանուր կատարվող 2044 հոգի, որոնցից 1953 հայ, 91 մուսուլման: Այսինքն՝ Չակամ գավառի բնակչության ճնշող մեծամասնությունը՝ 95,5%-ը հայեր են, իսկ 4,5%-ը մուսուլմաններ⁸³: Գավառի լքված գյուղերը 17-ն են⁸⁴, որը կազմում է ընդհանուր գյուղերի մոտ 55%-ը: Այս գյուղերի անմարդաբնակ դառնալը պայմանավորված է տարբեր հանգամանքներով: Իրանց մի մասը դեռևս ավելի վաղ էր դատարկվել՝ կապված զանազան գործոններով՝ պարսկա-օսմանյան պատերազմներ, համաճարակներ, վրացական զորքերի ավարառություն: Անկասկած, լեզգիների արշավանքի հետևանքով նույնպես բնակավայրերի մի զգալի մասը դատարկվել է⁸⁵: Հատկանշական է, որ նոր դատարկված գյուղերը հարկամատյանում հիմնականում ներկայացվում են որպես կարաչոուլուների կողմից ավերված բնակավայրեր: Նույն կերպ հեղինակները վարվել են նաև հարակից նահիյեների պարագայում: Կարաչոուլուների՝ դեպի տարածաշրջան արշավանքների վերաբերյալ վերոնշյալ տվյալները այլ աղբյուրներով չեն հաստատվում: Ամենայն հավանականությամբ, օսմանյան հարկամատյանի կազմողները լեզգիներին կարաչոուլու են կոչել: Այս պարագայում հնարավոր է, որ «կարաչոուլու» բառը գործածված է ոչ թե որպես էթնոնիմ, այլ սոցիոնիմ, այն է՝ ասպատակող ու ավարառու ցեղի ընդհանրական անուն: Հարկամատյանի՝ բնակչության թվաքանակի վերաբերյալ տվյալները թեև ընդհանուր պատկերացում են տալիս երկրամասի ժողովրդագրական պատկերի վերաբերյալ, սակայն պետք է կարծել, որ իրականում բնակչության թիվն ավելին պետք է լիներ: Անկասկած, բնակչության մի հատված խուսափել է հարկահաններից: Կարելի է ենթադրել, որ մի մասը փախել է անմատչելի վայրեր, մի մասն էլ կաշառքների միջոցով խուսափել է հաշվառումից: Բացի այդ, տարածաշրջանում նոր էին ավարտվել ռազմական գործողությունները, և

⁸¹ Հարկամատյանում նշված է Բրիտոնյա ձևով:

⁸² Մասնագիտական գրականության մեջ՝ ֆինվոդ ժամանակաշրջանի ընտանիքի միջին թվաքանակը տատանվում է 5-10 միջակայքում: Որպես հայկական ընտանիքի միջին թվաքանակ նախընտրել ենք 7-ը, որը կարծում ենք ավելի ընդունելի է, տե՛ս **Գ. Երանյան**, *Հայ ընտանիքի անդամների միջին թվաքանակն ըստ XV դ. ձեռագրերի հիշատակարանների*, Երևան, 2015: Տե՛ս **Մ. Մալխասյան**, *Ժողովրդագրական գործընթացների միտումները և առանձնահատկությունները Հայաստանում XVII դ. առաջին կեսին*, Հայագիտության հարցեր, 1 (7), Երևան, 2016, էջ 94-104:

⁸³ Տե՛ս վերոբերյալ աղյուսակը:

⁸⁴ Թվի մեջ ներառված չեն մագրաները:

⁸⁵ Օրինակ Պապաշան գյուղը, որը բազմիցս հիշատակված է ոչ վաղ անցյալի ձեռագիր հիշատակարաններում, դաֆթարում ներկայացվում է որպես դատարկված:

բնակչությունը դեռևս լիարժեք չէր վերադարձել խաղաղ պայմանների կենսակերպին:

Այսպիսով, ժէ դ. ստեղծված բարենպաստ պայմանները դրական ազդեցություն ունեցան Զակամ գավառում բնակչության թվաքանակի աճի տեսանկյունից: Գավառում կատարվեցին շինարարական աշխատանքներ, ակտիվացավ հողևոր կյանքը: Որպես ապահով վայր՝ այստեղ ապաստանեցին նաև այլ վայրերից հեռացած հայեր: Հին բնակավայրերը հետզհետե ավելի ընդարձակվեցին, հիմնադրվեցին նոր գյուղեր: Սակայն դարավերջին Սեֆյան տերության թուլացումը և լեզգիների պարբերաբար կրկնվող արշավանքները ծանր հետևանքների հանգեցրեցին: Մի շարք գյուղեր ավերվեցին, բնակչության մի մասը գերեվարվեց: Գավառը տուժեց նաև վրացական զորքերի կողոպուտից, որին հաջորդեց երկրամասի նվաճումը Օսմանյան կայսրության կողմից: Օսմանյան հարկացուցակի տվյալները կարևոր տեղեկություններ են պարունակում գավառի ժողովրդագրության, տնտեսության և այլ ոլորտներին առնչվող մի շարք հարցերի վերաբերյալ: Հարկամատյանի տեղեկությունները թույլ են տալիս պնդել, որ գավառը, թեև մեծապես տուժել է երկարատև ռազմական գործողություններից ու կողոպուտներից, այնուամենայնիվ, դեռևս պահպանել է բավականաչափ հայ բնակչություն: Քննվող ժամանակաշրջանում Զակամ գավառի հայկական բնակչությունը կազմում է բացարձակ մեծամասնություն:

ANDRANIK YESAYAN

THE PROVINCE OF ZAKAM IN THE 17TH CENTURY AND THE FIRST QUARTER OF THE 18TH CENTURY

Key words: Zakam province, Tavush, Ottoman Empire, tax register, Safavid Iran, Lezgins, demographic change, Armenian settlements, Muslims.

After the Persian-Ottoman sustained wars, from the second decade of 17th century, favorable conditions for demographic growth emerged in the Zakam province (currently, the territory of the province is part of the Getabek, Shamkor and Tovuz regions of the Republic of Azerbaijan). Construction works and activity in the spiritual life can be mentioned. As a result, Armenians from other places settled here, the old settlement was expanded, and new villages were founded. But the weakening of the Safavid Empire in the latter part of the century and the frequent Lezgin invasions led to grave consequences. Some villages were destroyed, and a part of the population was taken captive. The Ottoman Empire, in agreement with the Russian

side, occupied the entire region in 1725. The *Extensive Register of the Gandja-Karabakh Provinces* submitted in 1727 by the Turks contains important information on the demographic and economic situation in Zakam. The study of its data demonstrates that despite the unfavorable conditions and the recent wars, the province Zakam preserved numerous Armenian population which formed an absolute majority.

АНДРАНИК ЕСАЯН

ПРОВИНЦИЯ ЗАКАМ В 17 – ПЕРВОЙ ЧЕТВЕРТИ 18 В.

Ключевые слова: Закам, Тавуш, лезгины, Сефевидская Персия, Османская империя, Пространный реестр Гянджа-Карабахской провинции, армянское население.

Созданные в 17 в. благоприятные условия положительно сказались с точки зрения прироста населения провинции Закам (в настоящее время территории провинции входят в состав Гетабегского, Шамкорского и Товузского районов Республики Азербайджан). В провинции проводились строительные работы, активизировалась духовная жизнь. Здесь нашли убежище также армяне из других местностей. Старые поселения постепенно расширялись, основывались новые деревни. Однако ослабление в конце века империи Сефевидов и неоднократные нашествия лезгинов привели к тяжелым последствиям. Ряд деревень были разрушены, часть населения взята в плен. За этим последовала оккупация региона Османской империей. «Пространный реестр Гянджа-Карабахской провинции» составленный в 1727 г. турками, содержит важную информацию по ряду вопросов, касающихся демографии и экономики провинции Закам. Изучение данных показывает, что, несмотря на то что провинция сильно пострадала, там, тем не менее сохранилось многочисленное армянское население, составлявшее абсолютное большинство.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Գագիկ Դանիելյան

Պաշտոնական նամակագրությունը և դիվանագիտական ընձաները
հայ-մոնղոլական հարաբերություններում..... 5

Ստյոպա Պետոյան

Վահան և Սմբատ Դադյանցիների գրահրատարակչական
գործունեությունը Շուշիում 1880-ական թթ. 33

Անի Ոսկանյան

Ադանայի նահանգի հայերի տնտեսության վերականգնման
փորձերը 1910-1914 թթ. 55

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Գլորգ Տէր-Վարդանեան

Յովհաննէս Վ. Զօհրապեանի ձեռագրական և բնագրագիտական վաստակը.
Ինքնակենսագրականը..... 67

Օվսաննա Խաչատրյան

Գրիգոր Խլաթեցու կաֆաները որպես գանձարանային կաֆաների առաջին նմուշներ..... 91

Հայկ Համբարձումյան

Սննդային մոտիվները «Սասնա ծռեր» էպոսում և հայ
միջնադարյան գրականության մեջ. հերոսների նաշացանկը 105

Գառնիկ Ա. Հարությունյան

«Կտակ շարչարանաց»-ի կամ Ավագ ուրբաթի ֆարոգի՝ Սիմեոն
Ա. Երևանցի կաթողիկոսի խմբագրությունը 133

Հասմիկ Բադալյան

Կիրիկյան Հայաստանի Զորովանքը և գրչական ժառանգությունը 150

Դավիթ Սրկ. Սահակյան

Կրկին «Հանախասպատոմ հառերի» հեղինակի ու թվագրման հարցի շուրջ,
Աբրահամ Տերյանի մի հրատարակության առթիվ 165

ԱՐՎԵՍ

Իվեթ Թաշարյան, Սարա Լափորթ-Էֆթելսարյան

Մատենադարանի նորահայտ նկարագար դի էջ, որպես մշակութային
ազդեցությունների խորհրդանիշ 186

Միրանույ Բեգարյան

Թորոս Տարոնացու մանրանկարների պատկերագրության մարիամաբանական հեներ 196

ԲՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ**Ստելլա Վարդանյան**

Քսուֆի և օժանելիֆի պատրաստման հին հայկական դեղագիրը
Քսենոֆոնի «Անաբասիս» երկում 215

Կարինե Մոսիկյան

Մարմնագննական (ֆիզիոգնոմիկական) երկերը Մատենադարանի ձեռագրերում 225

**ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ 7-ՐԳ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ
(2021 թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 25-27) ՆՅՈՒԹԵՐ**

Զոհրաբ Գևորգյան

Թուղթը, առօրեականությունը և հասարակական փոխակերպումները
Կիլիկյան Հայաստանում 248

Գևորգ Ղազարյան

Դոնվիակ պատարագի ավանդույթը Հայ Առաքելական եկեղեցու ծիսակարգում 259

Անդրանիկ Եսայան

Զակամ Գավառը ժէ դ.-ժԸ դ. Առաջին Քառորդին 285

Տիգրան Գրիգորյան

«Աղամի արարումը» թե՛ «Հին ատուրցն Աստուած».
Դանիել մարգարեի վախճանաբանական տեսիլքը Նորավանքում
(վերլուծություն ըստ կանոնական և պարականոն բնագրերի) 299

Շողակաթ Դևրիկյան

Գրիգոր Լուսավորչին ներկայացնող մեկէջյա փորագրանկարները 18-րդ դարում
Կոստանդնուպոլսում տպագրված երեք «Յայսմատուր»-ներում 331

Գրեհա Գասպարյան

Նոր Զուղայում նկարագարողված ՄՄ 6772 Ավետարանի մեկ
էջը արևմտաբիստոնեական արվեստի համատեքստում 342

Արմինե Պետրոսյան

Թոչնամարտի թեման Հայաստանի Ժ-ԺԳ դարերի եկեղեցական ֆանդակում.
պատկերագրությունը և խորհրդաբանական եզրերը 353

Վահե Ավետիսյան

Հույն (Բյուզանդական) ուղղափառ եկեղեցու հետևորդ համայնքը
Կիլիկիայում ԺԳ-ԺԴ դդ. կեսերին 366

Հովհաննես Ա. Իգիթյան

Սարգիս Փիլիսոփա Բ-ի կորսված 532-ամյա պարբերաշրջանները.

Վերականգնում մաս երկրորդ. Հայոց շարժական տոմար-պարբերաշրջանը..... 379

Գոռ Գալստյան

Հովհաննես Սարկավագի «Մեկնութիւն տումարիս հայկազնեայ» երկը 425

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ**Անի Առաքելյան**

Հակոբ երեց Ամասիացի (Էմասիացի). հայկական ուշ միջնադարի

նորահայտ բանաստեղծը 445

Տաթևիկ Մանուկյան

Տեր Խաչատուր Քուրտանցին և նրա փերականությունը 476

Վանո Եղիազարյան, Անի Ժ. Ավետիսյան

Մի անտիպ երկլեզվյան տաղ Հովհաննես Թյկուրանցուց 504

ՀԱՂՈՐԴՈՒՄ**Լուսինե Սարգսյան**

Հայ ձեռագրավեստի ուսումնասիրությունը թվային դարում..... 509

Բանբեր Մատենադարանի հանդեսի հոդվածների ձևավորմանը

վերաբերող պահանջներ 525

CONTENTS
HISTORY**Gagik Danielyan**

Official Correspondence and Diplomatic Gifts in the Armenian-Mongol Relations (Parts 1 and 2).....5

Styopa Petoyan

Publishing Activities of Vahan and Smbat Dadyants' in Shushi in the 1880s.....33

Ani Voskanyan

The Armenians' Attempts to Revive the Economy in Adana Province Between 1910 and 1914.....55

PHILOLOGY**Gevorg Ter-Vardanyan**

Yovhannēs Vardapet (Archimandrite) Zohrapean as Text Critic and Scribe, His Autobiography.....67

Ovsanna Khachatryan

The *Kafas* of Grigor Khat'ets'i as the First Samples in the Collections of Sacred Chants91

Hayk Hambardzumyan

Food Motives in the Epic “Daradevils of Sassoun” and in the Armenian Medieval Literature: Heroes' Menu.....105

Garnik A. Harutyunyan

The Recension of the “Testament of the Passion [of Christ]” or the Sermon of Good Friday by Catholicos Simeon I Erewants'i133

Hasmik Badalyan

Dzorovank' Monastery of Cilician Armenia and its Scriptorial Heritage.....150

Deacon David Sahakyan

Once Again on the Authorship and Date of “The Oft-Repeated Discourses of St. Gregory the Illuminator”: on the Occasion of a Recent Publication by Abraham Terian.....165

ART

Yvette Tajarian, Sarah Laport-Eftekharyan

A Newly Discovered Illustrated Page as a
Symbol of Cultural Influences.....186

Siranush Beglaryan

The Mariological Basis of T'oros Taronats'i's Iconography.....196

NATURAL SCIENCES

Stella Vardanyan

The Ancient Armenian Recipe for Preparing Ointment and Incense
According to Xenophon's *Anabasis*.....215

Karine Mosikyan

Physiognomical Works in the Manuscripts
of Matenedaran.....225

**PROCEEDINGS OF THE 7TH INTERNATIONAL CONFERENCE OF
YOUNG RESEARCHERS (NOVEMBER 25-27, 2021)**

Zohrab Gevorgyan

Paper, Everyday Life and Social Transformations
in Cilician Armenia.....248

Gevorg Kazaryan

The Tradition of the Liturgy Behind Closed Doors in the Armenian
Apostolic Church Rite.....259

Andranik Yesayan

The Province of Zakam in the 17th Century and the First
Quarter of the 18th Century.....285

Tigran Grigoryan

The Creation of Adam or Ancient of Days?: The Prophetic Vision of Daniel
in Noravank' (a Discussion on the Basis of Canonical and Apocryphal Texts).....299

Shoghakat Devrikyan

Full-Page Engravings with Images of Gregory the Illuminator in the
Three Synaxaria Published in the 18th Century in Constantinople.....331

Greta Gasparyan

One Page of the Gospel M 6772 Illustrated in New Julfa in the
Context of Western Christian Art.....342

Armine Petrosyan

Birds Combat Scene in Armenian Church Decoration of X-XIV
Centuries: Iconography and Symbolic Perceptions.....353

Vahe Avetisyan

Greek-Orthodox (Byzantine) Community in Cilicia
From the XIII - to the Middle of the XIV Century.....366

Hovhannes A. Igityan

The Lost 532 Years Calendar-Cycles of Sargis Philosopher the Second.
Reconstruction (Part II. The Armenian Non-Fixed
Calendar and the 532-Year Cycle).....379

Gor Galstyan

The *Commentary of the Armenian Calendar*
by Yovhannēs Sarkavag.....425

PUBLICATIONS**Ani Arakelyan**

Priest Yakob Amasiats'i (Emasiats'i):
An Unknown Late Medieval Armenian Poet.....445

Tatevik Manukyan

Ter Khach'atur K'urtk'ants'i and His Grammar.....476

Vano Yeghiazaryan, Ani J. Avetisyan

An Unpublished Poem by Yovhannēs T'lkurants'i.....504

REPORT**Lusine Sargsyan**

Study of Armenian Manuscript Art in Digital Era.....509
Requirements for the articles in the journal of The *Bulletin of Matenadaran*.....525

СОДЕРЖАНИЕ

ИСТОРИЯ

Гагик Даниелян

Официальная переписка и дипломатические дары в Армяно-Монгольских отношениях (части 1 и 2).....5

Стёпа Петоян

Издательская деятельность Ваана и Смбата Дадянцев в Шуши в 1880-х гг.....33

Ани Восканян

Попытки армян восстановить экономику в провинции Адана в 1910–1914 гг.....55

ФИЛОЛОГИЯ

Геворг Тер-Варданян

Рукописное и текстологическое наследие вардапета Ованеса Зограбяна и его автобиография.....67

Овсанна Хачатрян

Кафы Григора Хлатеци как первые образцы жанра в певческих сборниках-гандзаранах.....91

Айк Амбарцумян

Пищевые мотивы в эпосе «Сасна црер» (Давид Сасунский) и в армянской средневековой литературе: меню героев.....105

Гарник А. Арутюнян

Редакция “Завещания страстей...”, или проповеди Страстной пятницы католикоса Симеона I Ереванци.....133

Асмик Бадалян

Рукописное наследие монастыря Дзорованк Киликийской Армении.....150

Диакон Давид Саакян

Вновь об авторстве и времени создания “Многовещательных речей св. Григория Просветителя” (по поводу публикации Абраама Терьяна).....165

ИСКУССТВО

Ивет Таджарян, Сара Лапорт-Эфтехарян

Новооткрытая иллюстрированная страница как символ культурных влияний..... 186

Сирануш Бегларян

Мариологическая основа иконографии Гороса Таронаци..... 196

ЕСТЕСТВЕННЫЕ НАУКИ

Стелла Варданян

Древний армянский рецепт приготовления мази и благовония из «Анабасиса» Ксенофонта 215

Карине Мосикян

Сочинения о физиогномике в рукописях Матенадарана 225

ИЗ МАТЕРИАЛОВ 7-ОЙ МЕЖДУНАРОДНОЙ КОНФЕРЕНЦИИ МОЛОДЫХ УЧЕНЫХ (25-27 НОЯБРЯ, 2021 Г.)

Зохраб Геворгян

Бумага, повседневная жизнь и социальные преобразования в Киликийской Армении..... 248

Геворг Казарян

Традиция Литургии при Закрытых Дверях в обиходе Армянской Апостольской церкви..... 259

Андраник Есяян

Провинция Закам в 17 – первой четверти 18 в..... 285

Тигран Григорян

“Сотворение Адама” или “Ветхий Днями”: пророческое видение Даниила в Нораванке (анализ по Каноническим и Апокрифическим текстам) 299

Шогакат Деврикян

Полнолистовые гравюры с изображением Григория Просветителя в трех сборниках «Синаксария», изданных в XVIII веке в Константинополе..... 331

Грета Гаспарян

Страница Евангелия М 6772 в контексте Западно-христианского искусства..... 342

Армине Петросян

Сюжет с «Борющимися» птицами в церковной пластике
Армении X-XIV вв.: иконография и символизм.....353

Ваэ Аветисян

Греко-Православная (Византийская) община
в Киликии XIII - середины XIV вв.....366

Ованнес А. Игитян

Утраченный 532-летний календарный цикл Саргиса Философа второго.
Реконструкция (часть II. Армянский подвижный календарь и 532-летний цикл).....379

Гор Галстян

Толкование армянского
календаря Ованнеса Саркавага.....425

ПУБЛИКАЦИИ**Ани Аракелян**

Иерей Акоб Амасийский (Эмасийский),
неизвестный армянский поэт Позднего Средневековья.....445

Татевик Манукян

Тер Хачатур Куртканци и его грамматика.....476

Вано Егиазарян, Ани Ж. Аветисян

Неизданное двуязычное стихотворение
Ованнеса Тлкуранци.....504

СООБЩЕНИЕ**Лусине Саргсян**

Изучение армянского рукописного искусства в цифровую эпоху.....509

Требования к оформлению статей в журнале *Вестник Матенадарана*.....525

ԲԱՆԹԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

Հատոր 33

BULLETIN OF MATENADARAN

Volume 33

ВЕСТНИК МАТЕНАДАРАНА

Том 33

Համակարգչային ձևավորումը և էջադրումը՝ Անահիտ Խանգաղյանի
Շապիկի ձևավորումը՝ Մարտիրոս Տոլմանեանի
Շապիկին՝ Թորոս Տարոնացի, Տիրամայրը մանկան հետ, Մատթեոսի
Ավետարանի անվանաթերթ, ՄՄ 6289, էջ 12ա
Սրբագրիչ՝ Արմինե Գրիգորյան
Հրատարակչական խմբագիր՝ Հայկ Համբարձումյան

Տպագրված է «ՔՈՓԻ ՓՐԻՆԹ» ՍՊԸ տպարանում

Ք. Երևան, Ներսիսյան 1

Չափսը՝ 70×100 1/16, տպագրական մամուլ՝ 33,5

տպաքանակ՝ 150

Մատենադարան

Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտի

հրատարակչական բաժին, ֆ. Երևան, Մաշտոցի պող. 53, հեռ. (010) 513033

publishing.matenadaran@gmail.com

Ամսագրի թվային տարբերակը՝

banber.matenadaran.am/download-category/բանբեր-մատենադարանի/